# Արձանագրություն N 4

«ԼՈՒՍ-ԲԸՀԱՇՁԲ-16/1» ծածկագրով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Սեբաստիա 7

«11» «02» 2016թ
ժ.14:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Շ. Սաֆարյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Է. Աղայանը, Ն. Սարգսյանը և Ս. Պապյանը |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ռ. Քալանթարյանը |

1. Հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի հայտերի բացման մասին
(Շ. Սաֆարյան)

Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| | | | |
|---|---|---|---|
| 1. | «ԷՅԲԻՎԻ» ՍՊԸ | - | ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1, ՀՎՀՀ 01573567<br>էլ. հասցե՝ info.abv88@gmail.com |

Որոշում թիվ 1.
Հանձնաժողովը որոշեց

Հրավերով սահմանված՝ հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու, բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին նախնական տվյալներով համապատասխանում են:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

«ԷՅԲԻՎԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացված է ստորև բերված աղյուսակում

| Աշխատանքի անվանումը | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ* | Ընդհանուրը |
|---|---|---|---|---|
| Գծանշման աշխատանքներ | 40720721 | 4479279 | --- | 45200000 |

Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունել ի գիտությունը, որ ընթացակարգի քարտուղարը գնահատման թերթիկների երկուական օրինակ հանձնեց հանձնաժողովի անդամներին:

Որոշում թիվ 2.
Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին;

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ամփոփվեց «ԷՅԲԻՎԻ» ՍՊԸ-ի հայտի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

| Մասնակցի հայտի գնահատման չափանիշները | | Գնահատականը | Մասնակցի հայտի գնահատման արդյունքները<br>Մասնակցի անվանումը<br>«ԷՅԲԻՎԻ» ՍՊԸ |
|---|---|---|---|
| 1 | Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին | Բավարար<br>Անբավարար | Բավարար |
| 2 | Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին | Բավարար<br>Անբավարար | Բավարար |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ | | Բավարար<br>Անբավարար | Բավարար |

Որոշում թիվ 3.
Հանձնաժողովը որոշեց «ԷՅԲԻՎԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար հետևյալ հիմնավորմամբ հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում են.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Որոշում թիվ 4.

Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և հաշվի առնելով, որ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, հանձնաժողովը որոշեց «ԷՅԲԻՎԻ» ՍՊԸ-ի հետ առաջարկված գնի նվազեցման նպատակով վարել բանակցություններ:

Բանակցությունների համար սահմանվել է 20 րոպե ժամանակ:

Բանակցությունների արդյունքում «ԷՅԲԻՎԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը նվազեցվեց սահմանելով 44400000 (քառասունչորս միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ինչը ներկայացված է ստորև բերված աղյուսակում

| Աշխատանքի անվանումը | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ* | Ընդհանուրը |
|---|---|---|---|---|
| Գծանշման աշխատանքներ | 40720721 | 3679279 | --- | 44400000 |

Ներկայացված գնային առաջարկի հիման վրա հանձնաժողովը որոշեց 1-ին տեղը զբաղեցնող ճանաչել «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Որոշում թիվ 5.

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը հանձնաժողովը որոշեց

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

## 2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Շ. Սաֆարյան)

Որոշում թիվ 6.

Հանձնաժողովը որոշեց «ԼՈՒՍ-ԲԸՀԱԾՁԲ-16/1» ծածկագրով բանակցային ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու հաջորդող աշխատանքային օրը, ժամը 14:30-ին, ք. Երևան, Սեբաստիա 7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ՝ | [signature] | Շ. Սաֆարյան |
| Անդամներ՝ | [signature] | Է. Աղասյան |
| | [signature] | Ն. Սարգսյան |
| | [signature] | Ս. Պապոյան |
| Քարտուղար՝ | [signature] | Ռ. Քալանթարյան |

«ԷՅԲԻՎԻ» ՍՊԸ-ի տնօրեն Հակոբ Հակոբյան՝ [signature]

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան «11» «04» 2016 թ.

Մենք ներքոստորագրյալներս, «ԼՈՒՍ-ԲԸՀԱՇՁԲ-16/1» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ վերոնշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ՝ | | Շ. Սաֆարյան |
| Անդամներ՝ | | Է. Աղասյան |
| | | Ն. Սարգսյան |
| | | Ս. Պապոյան |